ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 457-Ա/2 22.04.2020թ.

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 105-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ցեղասպանության 105-րդ տարելիցի հիշատակման միջոցառումը կազմակերպելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ցեղասպանության 105-րդ տարելիցի հիշատակման միջոցառման կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005.Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 17038,2 (տասնյոթ միլիոն

երեսունութ հազար երկու հարյուր) հազար դրամ՝ 2020 թվականին ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ցեղասպանության 105-րդ տարելիցի հիշատակման միջոցառման կազմակերպման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2020 թ.
N հրամանի

ԾՐԱԳԻՐ

Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ցեղասպանության 105-րդ տարելիցի հիշատակման միջոցառման կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Իսահակյան 1
3	Ծրագրի անվանում	Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում ցեղասպանության 105-րդ տարելիցի հիշատակման միջոցառում
3.1	Բովանդակություն	Հայոց ցեղասպանության 105-ամյակի շրջանակներում Հարգանքի տուրք է մատուցվելու ցեղասպանության զոհերի հիշատակին՝ առավոտյան ՀՀ բարձրաստիճան պաշոնատար անձիք և Վեհափառ հայրապետը այցելելու են Հայոց ցեղասպանության հուշահամալիր, որտեղ նախապես դրվելու են շուրջ 60000 ծաղիկներ, նույն օրը երեկոյան իրականացվելու է առցանց միացումով համերգ, որի ընթացքում, օրվա խորհրդին համահունչ, կհնչեն հայկական դասական, ժողովրդական, հոգևոր երաժշտություն՝ ճանաչված երաժիշտների կատարմամբ. Նարեկ Հախնազարյան, Հասմիկ Պապյան, Լիանա Ալեքսանյան, Հայկ Մելիքյան և այլոք: Նախատեսվում է համերգը հեռարձակել on-line տարբերակով, որը ևս մի հնարավորություն է մշակութային դաշտում ճանաչում ունեցող արվեստագետների միջոցով ի լուր աշխարհի հայտարարելու, որ Հայաստանը դեմ է ցեղասպանության ցանկացած դրսևորման:
3.2	Նպատակ	Ծրագրի նպատակն է՝ արվեստի ազդեցիկ լեզվով արդարամտության, բարոյականության անանց արժեքները փոխանցելու, Ցեղասպանության զոհերի հիշատակի հանրահռչակման կարևորությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանը 2015 թվականից հայ-տարարել է, որ միջազգային հարթակներում հանդես է գալու որպես ցեղասպանության բոլոր դրսևորումների կանխարգելման պաշտպան, համերգային ծրագրի իրականացումը միտված կլինի մշակութային դաշտում ճանաչում ունեցող արվեստագետների միջոցով ի լուր աշխարհի հայտարարելու, որ Հայաստանը դեմ է ցեղասպանության

		ցանկացած դրսևորման:
3.3	Անցկացման ժամկետ	Ապրիլի 24 2020թ.
3.4	Անցկացման վայր	Երևան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
3.5	Ակնկալվող արդյունքներ	Արդյունքում Հարգանքի տուրք կմատուցվի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, կարժևորվի մշակույթի դերակատարությունը հանրային և միջազգային հարցերի լուծման գործընթացներում, ճանաչված հայազգի երաժիշտների մասնակցությամբ համերգի on-line հեռարձակումը կնպաստի հայկական կատարողական արվեստի միջոցով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման հանրահռչակմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ակնկալվում է շուրջ 800.000 ունկնդիր